272

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 01 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0004-23

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Համլիկ Սահակյան***
ք.Երևան, Մ. Մելիքյան 5

Գործունեությունը՝ ***Նորք-Մարաշ վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց 213/9 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0004-23
<16> 01 2023թ.

Քաղաքացի Հասմիկ Սահակյանի կողմից ներկայացված Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց 213/9 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Հասմիկ Սահակյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ քաղաքացի Հասմիկ Սահակյանի կողմից Նորք-Մարաշ վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոցի 213/9 հասցեում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք: Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի շենք:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. օգոստոսի 16-ի N01/18-07/1-2-76838-822 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա (նախագծման թույլտվության ժամկետը սահմանված է երեք տարի), անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.471853 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատարածքը՝ բնակելի կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7 կետի ա ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոցի 213/9 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքը իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք՝ ծանրաբեռնված է բնակելի տնով /384 մ²/, ինքնակամ շինությամբ /95.2 մ²/ և ավտոտնակով /84 մ²/: Ավտոտնակը և ինքնակամ շինությունը նախատեսվում է ապամոնտաժել՝ 2022 թ. հոկտեմբերի 5-ի N03/Դ-85455 քանդման թույլտվության համաձայն: Հողամասի վրա սեփականության վկայականով ամրագրված 384 մ² մակերեսով բնակելի տունը պահպանվելու է, այն ներառված է կառուցապատման մակերեսում: Հողատարածքի հարևանությամբ գտնվում են կառուցապատումից ազատ և բնակելի շինություններով

ծանրաբեռնված հողամասեր: Մոտակա բնակելի շենքի հեռավորությունը նախատեսվող գործունեության տարածքից կազմում է 15.7 մ:

Հողատարածքում գոյություն ունեցող հենապատը (80-90 մ) ապամոնտաժվելու է, քանի որ հենապատի ներկայությունը թույլ չի տալիս շենքի ամբողջական տեղակայմանը, բոլոր անվտանգության միջոցառումները պահպանվելու են: Հենապատի ապամոնտաժումն իրականացվելու է շերտային եղանակով, ինչը բացառում է քարաթափման հնարավորությունը Սարալանջ փողոցի վրա: Հենապատը Սարալանջ փողոցից գտնվում է 10-12 մ հեռավորության վրա:

Համաձայն Հայտի՝ գեոմորֆոլոգիական տեսակետից նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական նպատակներով ենթարկվել է հարթեցման և ռելիեֆի բացարձակ նիշերը տատնվում են 1203-1204 մ սահմաններում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից, տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում: Նորք-Մարաշ համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում բնության և (կամ) պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Բնության հատուկ պահպանվող պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա և հարակից տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի հանդիսանալու շրջակա բնակչության համար վիզուալ տեսադաշտի խոչընդոտ:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- Հողակտորի մակերեսն է – 4718.53 մ^2,
- կառուցապատման մակերեսն է– 1575.0 մ^2 և 384.0 մ^2 (գոյություն ունեցող շինություն) /41.53 %,
- կանաչապատման մակերես - 1889.0 մ^2 /40.033 %/,
- կիսանկուղային հարկի տանիքածածկույթ՝ սալապատված - 124.97 մ^2,
- ճանապարհային հատվածամաս - 471.8 մ^2 ,
- մայթեզրեր - 273.96 մ^2,
- վերգետնյա մակերես - 7875.0 մ^2,
- ստորգետնյա մակերես - 4272.0 մ^2,
- բնակարանների թիվը՝ 89 բնակարան,
- ավտոկայանատեղիի քանակն է - 63 (48 և 15 հատ) /70.7 %/:

Բազմաբնակարան բնակելի շենքերն ունեն երկու կիսանկուղային և հինգ վերգետնյա հարկեր: Մասնաշենքերից յուրաքանչյուրում նախատեսված են թվով երկու աստիճանավանդակ և մեկ վերելակ: Աստիճանավանդակներն իրականացված են հակահրդեհային դռներով և բնական լուսավորությամբ: Աստիճանավանդակներում նախատեսվում է թարմ օդի ներածման և ծխի հեռացման ինքնաշխատ համակարգ, աստիճանավանդակները և նկուղային հարկերում առկա սենքերը նախատեսված են հակահրդեհային դռներով:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԻԿՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Բնակելի շենքի երկու կիսանկուղային հարկերից -1 կիսանկուղային հարկի /2132.0 մ²/ Սարալանջի կողմը, որն ամբողջությամբ դուրս է հողային ծածկույթից, նախատեսված են բնակարաններ, իսկ ետին մասում ավտոկայանատեղի, իսկ -2 հարկի կիսանկուղային հարկում /2132.0 մ²/ նախատեսվում է ավտոկայանատեղի, որի հատվածում առկա է 280.0 մ² մակերեսով հասարակական տարածք: Կիսանկուղային հարկերը անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել որպես քաղաքացիների ապաստարան: Մուտքը դեպի հողակտոր Այգեստան փողոցից է:

Կառուցապատվող հողատարածքին կից գտնվում է բացօդյա ավտոկայանատեղի, որը համարվում է կառուցապատողի սեփականություն և մասնակիորեն կհատկացվի բնակիչներին՝ ավտոմեքենաները կայանելու համար:

Մասնաշենքերերի վերգետնյա մասի ճարտարապետական լուծումներն ամբողջությամբ նույնն են և տեղակապված են հայելային շրջմամբ: Շինությունների երեսապատման համար նախատեսվում է օգտագործել տրավերտինե սալերի երեսպատում՝ ֆիբրոցեմենտի սալերի համադրությամբ:

Շինության արտաքին պատերը և բնակարանների ներքին բաժանարար պատերը նախատեսվում է իրականացնել 20 սմ հաստությամբ բլոկե շարով, իսկ բնակարանների միջսենյակային պատերը՝ գիպսեստվարաթղթի կիրառմամբ:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

Համաձայն Հայտի՝ բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարումը ըստ ՀԷՑ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագր, հնարավոր կլինի իրականացնել կառուցվելիք ենթակայանի 0.4կՎ վահանից: Նոր ենթակայանի սնուցումը կիրականացվի ՏԵ7741-ի 10կՎ-ի ԲՍ-ից՝ համաձայն տեխնիկական պայմանի: Նոր ենթակայանը կտեղադրվի ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից կառուցապատման հողատարածքի սահմաններից դուրս:

Գազամատակարարումը P=0.3 ՄՊա ճնշման և Q=270 մ³/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Ջրվեժ սնող Dպ-300 կողմնատար-գազատարից: Բնակելի համալիրում կենտրոնացված կաթսայատուն չի նախատեսվում, բնակարանների ջեռուցումը կիրականացվի անհատական կաթսաներով:

Հատկացված հողատարածքում բնակելի շենքի համար նախատեսվում է կառուցել արտաքին և ներքին ջրամատակարարում և կոյուղի, անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի: Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հակահրդեհային հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն: Ջրամիացումն իրականացվելու է Չարենցի փողոցով անցնող d=200 մմ ջրատարից: Ջրահեռացման միացման կետը կլինի Չարենցի փողոցով անցնող d=500 մմ տրամագծի գործող կոյուղագիծը:

Ջրաչափական հանգույցի և հհ հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր: Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը և հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է մետաղական պահուստային բաքի տեղադրում:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը կատարվելու է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում կտեղադրվեն անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն միանալով Չարենցի փողոցով անցնող d=300 մմ հեղեղատար ցանցին: Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները:

02543183 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ նախագծման ընթացքում հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ. շինության մուտքային հանգույցներում նախատեսվել են թեքահարթակներ, իսկ շինության ներսում՝ վերելակներ:

Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում: Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

Շին. աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 36 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով, ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում, շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, շին. հրապարակի գիշերային լուսավորվածության աշխատանքներ: Հիմնական փուլում կատարվելու է մասնաշենքերի շինարարություն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու է երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500 մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները՝ կազմակերպելու են անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 190000 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 160000 մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի) ՝ 0.9 մ³ և շինարարական աղբն է՝ 1600 մ³ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմաբնակարան բնակելի շենքի շահագործման ընթացքում առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ընկերության կողմից:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (50 մարդ), ինչը կազմում է 2169 մ³/շին. ժամ. կամ 1.205 մ³/օր: 500 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 90 մ³/շին. ժամ. կամ 0.75 մ³/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի

02543163 ՓՈՐՁԱՓՈՒՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

2259 մ³/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25 խմ ծավալով տարողություն: Պարզարանում մեխանիկական պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Տարածքում առկա հողի բերրի շերտը՝ մոտ 3600մ³ կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի համար: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1889 մ²: Նախատեսվում է տնկել թույա, եղևնի, սիզամարգ (1889 մ²): Նախատեսվում է նաև դիտարկվող հողատարածքին կից 947 մ² մակերեսով համայնքային հողակտորի բարեկարգում:

Կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսվում է իրականացնել կազմակերպված ոռոգման ցանցով՝ կաթիլային հանգույցներով և ռետինե խողովակներով: Ոռոգման ջուրը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվող բնապահպանական միջոցառումներն են, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա՝ հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար, վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շին. հրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 1750 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն Հայտի՝ բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է մասնակի կառուցապատված տարածքում, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և հաստատված կանաչապատման նախագծի:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Ապահովել հայտում նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93-Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 և բնակելի շենքեր Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014 նորմերի՝ մասնավորապես 44-րդ աղյուսակով և 448-րդ, 449-րդ, 450-րդ կետերով սահմանված պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Հասմիկ Սահակյանի կողմից նախատեսվող Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Այգեստան 11 213/9 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան